ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

1 մարտի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

28
(2878)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԽՈՊԱՆԻՑ ԵԿԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՆՎԱԶԵԼ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից տեղեկացավ, որ արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը 2023թ. հունվար-դեկտեմբերին, նախորդ տարվա համեմատ, եղել է ցածր մակարդակում:

Նկատենք, որ 2023 թվականին բանկային համակարգի միջոցով դեպի Հայաստան փոխանցված գումարների զուտ ներհոսքը (ներհոսքի եւ արտահոսքի տարբերությունը) կազմել է 1.7 մլրդ ԱՄՆ դոլար, որն էականորեն ավելի ցածր է նախորդ տարվա 2.6 մլրդ ԱՄՆ դոլարից: Հատկանշական է, որ զուտ ներհոսքի նվազումը հիմնականում պայմանավորված է ՀՀ-ից արտահոսքի աճով, որի ծավալը 2023 թվականին կազմել է շուրջ 4.0 մլրդ ԱՄՆ դոլար՝2022թ. 2.6 մլրդ դոլարի համեմատ աճելով շուրջ 55.0%-ով, մինչդեռ ներհոսքը նույն ժամանակահատվածում աճել է ընդամենը 9.7%-ով՝ կազմելով 5.7 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 5.2-ի դիմաց:

Արցախի ԱԺ պատգամավորները հերթով հրավիրվում են Քննչական կոմիտե՝ հարցաքննության: Մեր տեղեկություններով՝ Հայաստանի իրավապահները ԱՀ խորհրդարանականներին հարցնում են Արցախում տեղի ունեցած վերջին իրադարձությունների, մասնավորապես՝ Ադրբեջանի կողմից ապօրինի կալանավորված Արցախի նախկին նախագահ Արայիկ Հարությունյանի հրաժարականի պատճառների մասին: Ինչպես մեզ փոխանցեցին, մինչ օրս հարցաքննվել են Արցախի իշխանական թեւի պատգամավորները՝ Արայիկ Հարությունյանի՝ Արցախի «Ազատ հայրենիք - ՔՌՄ» խմբակցության պատգամավորները: Մեզ հետ զրույցում «Ազատ հայրենքի - ՔՌՄ» խմբակցության պատգամավոր Արամ Հարությունյանը նշեց, որ ինքը չի կանչվել ու թիմակիցների մասով էլ նման տեղեկություն չունի: «Միգուցե կանչվել են, ես տեղյակ չեմ, բայց ինձ չեն կանչել հարցաքննության»,-ասաց պատգամավորը: Հավելենք, որ քննիչները հիմնականում պատգամավորներից հետաքրքրվում են, թե ով է ճնշել Արայիկ Հարությունյանին, որ հրաժարական տա, ինչ է տեղի ունեցել կուլիսներում: Թերեւս կա քաղաքական հրահանգ Արցախի իշխանությունների վրա Հայաստանից գործադրված ճնշումների մասին ցուցմունքներ ստանալ Արցախի օրենսդիրներից, որպեսզի նախկին նախագահներին նոր մեղադրանքի առիթներ լինեն:



Հայաստանում շինարարության մեծ բումը նստում է: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ 2024թ. հունվարին շինարարության ոլորտում աճի տեմպը որոշակիորեն նվազել է՝ նախորդ տարվա համեմատ: 2024թ. հունվարին շինարարության աճը կազմել է 9.5%՝ շուրջ 2.7 տոկոսային կետով ցածր լինելով նախորդ տարվա հունվարի աճից, եւ շուրջ 6 տոկոսային կետով՝ նախորդ տարվա միջին ամսական ցուցանիշից, այսինքն՝ հունվարին քիչ շինարարություն է արվել: Իհարկե, գուցե, պայմանավորված է եղել եղանակով, բայց, ամեն դեպքում, բոլոր վերլուծություններով մայրաքաղաքում սկսված մեծածավալ շինարարության տեմպերը թուլանում են:

«Ժողովուրդ» օրաթերթը տեւական ժամանակ է՝ քաղաքացիներից բողոքներ է ստանում, որ Ozon ռուսական առցանց առեւտրի հարթակի միջոցով պատվերներ գրանցելուց եւ վճարում կատարելուց հետո գրեթե մեկ ամիս է անցել, սակայն դեռեւս պատվերի առաքում տեղի չի ունեցել: Խնդիրը լուծելու նպատակով քաղաքացիները դիմել են Ozon-ի առաքման կետեր, սակայն որեւէ բացատրություն ուշացման պատճառների եւ առաքման մոտակա ժամկետների վերաբերյալ չեն ստացել: Ստեղծված իրավիճակի շուրջ պարզաբանում ստանալու նպատակով «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել Ozon-ի գրասենյակային ներկայացուցիչների հետ, սակայն նրանք ողջ օրը այդպես էլ չարձագանքեցին մեր հեռախոսազանգերին: Այցելեցինք Երեւանի Աջափնյակ վարչական շրջանում գտնվող սպասարկման կերտերից մեկը, որպեսզի տեղում զրուցենք ղեկավարներից որեւէ մեկի հետ: Այնտեղ էլ մեզ փոխանցեցին, որ իրենք եւս չեն կարողանում որեւէ մեկի հետ կապ հաստատել եւ միայն որոշ խոսակցություններից տեղեկացել են, որ բեռնափոխադրող մեքենաներն այժմ գտնվում են Հայաստանի սահմանին, եւ կան որոշակի խոչընդոտներ, ինչի պատճառով չեն կարողանում մուտք գործել մեր երկրի տարածք: Հիշեցնենք, որ դեռեւս նախորդ տարվա հուլիսին Ozon-ը Երեւանում գործարկել էր տեսակավորման կենտրոն, եւ այսօր արդեն Երեւանում գործում են պատվերների ստացման բազմաթիվ կետեր: Արի ու տես, որ էլի քաղաքացու հարցերը մնում են անպատասխան, քանի որ պատասխանատուները «թռել են», իսկ քաղաքացիները՝ խաբվել:

ԶՐՈՒՅՑ

«ՃԻՇՏ ՈՒՂԵՐՁՆԵՐ ՏԱԼԸ ՇԱՏ ԿԱՐԵՎՈՐ Է»

«ՀայաՔվե» նախաձեռնության անդամ Մենուա Սողոմոնյանն ArmLur.am-ի հետ զրույցում հայտարարել է՝ թույլ չեն տալու իշխանություններին Հայաստանի Սահմանադրության մեջ որեւէ փոփոխություն անել:

-Պարոն Սողոմոնյան, գիտենք, որ Նիկոլ Փաշինյանը ազդարարել է սահմանադրական փոփոխությունների մասին, ասել է, որ Հայաստանին պետք է ամբողջովին նոր Սահմանադրություն, «ՀայաՔվե»-ն էլ իր հերթին հայտարարել է, որ պայքարելու է եւ թույլ չի տալու որեւէ փոփոխություն մայր օրենքում: Ի՞նչ եք պատրաստվում անել, որո՞նք են լինելու Ձեր առաջիկա քայլերը:

-Այո՛, հունվարի վերջին եւ՛ Ալիեւը, եւ՛ Նիկոլ Փաշինյանը նույն օրն այդ մասին հայտարարություն արեցին. Ալիեւը դա արեց որպես սպառնալիք, Փաշինյանը դա արեց որպես մանիպուլյացիա, որ, իբրեւ թե, մեր Անկախության հռչակագիրը կոնֆրոնտացիոն է, այն չի ապահովում խաղաղություն եւ այսպես շարունակ: Ո՞վ է ուզում փոխել Հայաստանի Սահմանադրությունը, ո՞վ է ուզում ՀՀ Սահմանադրության նախաբանից հանել Անկախության հռչակագրի վկայակոչումը: Ուզում է մեր թշնամին, որպեսզի հայոց պետականությունը փլուզվի: Եթե մենք հրաժարվում ենք մեր Անկախության հռչակագրից, նշանակում է մեր պետության հիմքում գտնված իրավական ակտերի շղթայի կարեւորագույն օղակն ենք վերցնում եւ մի կողմ գցում եւ դրանով մեր պետականությունը փլուզում: Մեր թշնամու նպատակն է վերացնել հայոց անկախ պետականությունը: Մենք սա պետք է հստակ հասկանանք եւ պետք է նաեւ ասենք, որ մենք այս համաժողովը պլանավորել էինք, իհարկե, հենց մեկ ամիս առաջ, երբ որ այդ հայտարարությունը եղավ: Մեր պայքարի փուլերից մեկն է սա: Խոսքը շատ կարեւոր է, ճիշտ ուղերձներ տալը շատ կարեւոր է, թշնամու նպատակները բացահայտելը կարեւոր է, ինչպես նաեւ շատ կարեւոր է ցույց տալը գործող իշխանությունների կոլաբորացիոնիզմը այդ ուղղությամբ:

-Պարոն Սողոմոնյան, գիտենք, ցանկացած փոփոխություն Սահմանադրության մեջ միայն պետք է ընդունվի հանրաքվեի միջոցով, այսինքն՝ ըստ էության, ժողովրդի որոշումն է սա լինելու: Ի՞նչ եք կարծում, իշխանություններին կհաջողվի՞ հանրության շրջանում կոնսենսուս ձեւավորել:

-Կարճ պատասխան. չի հաջողվելու: Դա չի կարող տեղի ունենալ, հայ ժողովուրդը չի կարող իր իսկ ձեռքով իր իսկ մահվան դատավճիռը կայացնել, բայց շատ կարեւոր է հասկանալ, որ մինչեւ հանրաքվեին հասնելը մենք բոլորս շատ գործ ունենք անելու: Նախեւառաջ պետք է բարձրաձայնենք ի լուր աշխարհի, որ մենք վճռական դեմ ենք լինելու մինչեւ հանրաքվեն մնացած բոլոր իրավական փուլերին:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԵԽ ԶԵԿՈՒՅՑ

ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Եվրոռոպական խորհրդարանը փետրվարի 28-ին ընդունած ԵՄ ընդհանուր անվտանգային եւ պաշտպանային քաղաքականության վերաբերյալ տարեկան զեկույցում ընդգծում է Հայաստանի նկատմամբ ագրեսիայի դեպքում Ադրբեջանի դեմ նպատակային ու հասցեական պատժամիջոցների կիրառման անհրաժեշտությունը:

Զեկույցում կոչ է արվում պատրաստ լինել նպատակային եւ անհատական պատժամիջոցներ կիրառել ագրեսիայի հեղինակների դեմ, բայց չսահմանափակվել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի քաղաքական եւ ռազմական շրջապատով եւ դադարեցնել նավթի ու գազի ներմուծումը Ադրբեջանից ցանկացած ռազմական ագրեսիայի դեպքում: Եվրախորհրդարանականներն ընդունված զեկույցով կոչ են անում ԵՄ-ին անհապաղ պատժամիջոցներ կիրառել Ադրբեջանի դեմ եւ կասեցնել էներգետիկայի ոլորտում ռազմավարական գործընկերության մասին փոխըմբռնման հուշագիրը: Ինչպես նաեւ կասկածի տակ են դնում 2024 թվականին COP29-ը հյուրընկալելու Ադրբեջանի համապատասխանությունը, մինչդեռ երկիրը ծրագրում է հաջորդ տասնամյակի ընթացքում իր հանածո վառելիքի արտադրությունն ավելացնել մեկ երրորդով:

Խորհրդարանականների կարծիքով՝ Հարավային Կովկասում ռազմական գործողությունների վերսկսման վտանգները լուրջ անհանգստության պատճառ են հանդիսանում եւ ցույց են տալիս տարածաշրջանում ԵՄ ավելի ակտիվ ներգրավման անհրաժեշտությունը:

Զեկույցում կոչ է արվում ԵՄ արտաքին գործողությունների ծառայությանն (ԵԱԳԾ) աջակցել երկու կողմերին պատմական խաղաղության համաձայնագրի հասնելու ճանապարհին, ինչպես նաեւ կոչ է անում կողմերին եւ միջազգային հանրությանը զգոն մնալ եւ մերժել դրսից եկող ցանկացած փորձ եւ սադրանք, որն ուղղված է երկու երկրներին թույլ չտալու հասնել կայուն խաղաղության համաձայնագրի:

Եվրախորհրդարանը մտահոգված է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման հեռանկարները մնում են փխրուն, այդ իսկ պատճառով ԵՄ-ն պետք է աջակցի եւ խրախուսի երկու կողմերին այս նպատակին հասնելու ճանապարհին, այդ թվում՝ առաջարկելով ԵՄ-ի հետ ավելի սերտ ինտեգրման հեռանկար, եթե նրանք որոշեն գնալ այդ ճանապարհով: Զեկույցը ողջունում է Հայաստանում Եվրոպական միության քաղաքացիական առաքելության (EUMA) ստեղծումը, որի նպատակն է նպաստել տարածաշրջանում անվտանգության բարձրացմանը՝ նվազեցնելով միջադեպերի թիվը Հայաստանի՝ հակամարտությունից տուժած եւ սահմանամերձ շրջաններում՝ նվազեցնելով բնակչության համար ռիսկերի մակարդակը:

Ընդունված զեկույցները կոչ են անում ոչ միայն ուժեղացնել եւ երկարացնել քաղաքացիական առաքելության մանդատը, այլ նաեւ դիտորդներ տեղակայել Թուրքիայի հետ սահմանի երկայնքով: Կոչ է արվում ԵԱԳԾ-ին պատրաստ լինել անհրաժեշտ տեխնիկական աջակցություն տրամադրելու Հայաստանին Խաղաղության եվրոպական գործիքի (European Peace Facility-EPF) միջոցով, որպեսզի Հայաստանը վերանայի իր ներկայիս ռազմական դաշինքները, քանի որ դա կամրապնդի Հայաստանի ճկունությունը անվտանգության, անկախության եւ ինքնիշխանության ապահովման համատեքստում:

Եվրոպական խորհրդարանն այս զեկույցով խնդրում է ԵԱԳԾ-ին, որպեսզի վերջինը ԵԽ արտաքին հարաբերությունների հանձնաժողովին եւ անվտանգության ու պաշտպանության ենթակոմիտեին գաղտնի ռեժիմով տրամադրի տեղում իրավիճակի մասին առաքելության:

ՄԱՆԴԱՏ ՉՈՒՆԵՆ

2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո ռուսական որոշակի կոնտինգենտ տեղակայվել է Սյունիքի մարզում անվտանգային խնդիրները լուծելու համար: Լրագրողների հետ ճեպազրույցում այս մասին հայտարարեց Ազգային ժողովի պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Արմեն Խաչատրյանը՝ անդրադառնալով վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարությանը, որ Ներքին Հանդի հատվածում ՌԴ սահմանապահների ներկայության մանդատ եւ պայմանագիր գոյություն չունի:

«Երեւի մոռացել եք, որ 2020 թվականին եղել է 44-օրյա պատերազմ, դրանից հետո խաղաղապահ զորքեր են մտցվել Արցախի տարածք, դրանից հետո որոշակի ռուսական կոնտինգենտ տեղակայվել է Սյունիքի մարզում, որպեսզի անվտանգային հարցեր լուծի: Իրավիճակով պայմանավորված, այո, այդպես է եղել, բայց հիմա քննություն է իրականացվում, որպեսզի այդ բոլոր իրավական խնդիրներին պատասխան տրվի՝ ով ինչ մանդատ ունի եւ որտեղ»,-նշեց Խաչատրյանը:

Ճշգրտող հարցին՝ ՌԴ սահմանապահ զորքերը իրավական որեւէ հիմք չեն ունեցել արդյոք, Խաչատրյանը պատասխանեց. «2021 թվականին, իրավիճակով պայմանավորված, տեղակայվել են այնտեղ զուտ անվտանգային խնդիրներ լուծելու համար»,-ասաց Խաչատրյանը՝ հավելելով, որ իրավական հիմքի վերաբերյալ քննությամբ պատասխան կստանան:

Նրա խոսքով՝ քննությունը տեղի է ունենում Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության եւ Արտաքին գործերի նախարարության հետ համատեղ այդ բոլոր իրավական խնդիրները լուծելու համար:

ՀՀ–ԱԴՐԲԵՋԱՆ

2024թ. փետրվարի 28-29-ը Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինում՝ Վիլլա Բորսիգում, կայացել են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի եւ Ադրբեջանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովի բանակցությունները:

ԱԳՆ-ից հայտնում են, որ նախարարները եւ նրանց պատվիրակությունները քննարկել են «Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության եւ միջպետական հարաբերությունների հաստատման վերաբերյալ» երկկողմ համաձայնագրի նախագծի դրույթների տեսակետները: Արտահայտվել է փոխադարձ համաձայնություն շարունակել բանակցությունները բաց հարցերի շուրջ:

Այցի ընթացքում նախարարները հանդիպում են ունեցել Գերմանիայի արտաքին գործերի նախարար Անալենա Բերբոքի հետ ինչպես երկկողմ, այնպես էլ եռակողմ ձեւաչափով:

Նախարար Միրզոյանն իր շնորհակալությունն է հայտնել Գերմանիային Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ բանակցությունները հյուրընկալելու համար:

ՉՊԵՏՔ Է ԱՆՊԱՏԻԺ ՄՆԱ

ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը հայտարարել է, որ ագրեսիան երբեք չպետք է անպատիժ մնա. փոխանցում է «Ամերիկայի ձայն»-ը: Նրա հայտարարությունը հնչել է այն ժամանակ, երբ սկսվել է Ուկրաինա ռուսական ներխուժման երրորդ տարին:

«Եթե պոտենցիալ ագրեսորին հասկացնեք, որ ագրեսիան կմնա անպատիժ, ապա դուք կբացեք Պանդորայի արկղը, եւ մյուսները նույնպես կարող են հետեւել նրա օրինակին», - հայտարարել է Բլինքենը Univision հեռուստաընկերությանը տված հարցազրույցի ժամանակ:

Նրա խոսքով՝ հենց այդ պատճառով են այդքան շատ երկրներ այդպես համառ կերպով պաշտպանում Ուկրաինային. այն եւ՛ ճիշտ է, եւ՛ խելամիտ, եւ՛ անհրաժեշտ:

Պետքարտուղարը անհրաժեշտություն է համարել «անել ամեն ինչ, որպեսզի մենք պաշտպանված լինենք եւ զսպենք ցանկացած պոտենցիալ ագրեսորների, որոնք, հնարավոր է, փնտրում են հնարավորություններ»:

«Այդ պատճառով ես մտածում եմ՝ կա շարունակական պարտավորություն ոչ միայն Միացյալ Նահանգների, այլ աշխարհի տասնյակ երկրների կողմից: Այդ պարտավորության նպատակն է այնպես անել, որ Ուկրաինան ուժեղ ժողովրդավարություն կառուցելու համար ռազմական, տնտեսական եւ ժողովրդավարական առումով ունենա ամեն անհրաժեշտը»,- հայտարարել է Բլինքենը:

Ամերիկյան դիվանագիտության ղեկավարն ասել է, որ կարծում է, որ անհրաժեշտ է, որ Կոնգրեսը լրացուցիչ օգնություն տրամադրի Ուկրաինային, ինչի մասին խնդրել է նախագահ Ջո Բայդենը:

Նրա խոսքով՝ 60 միլիարդ դոլարի գրեթե ամբողջ օգնությունն իրականում ԱՄՆ-ում կծախսվի այն սարքավորումների արտադրության եւ կառուցման վրա, որոնք կուղարկվեն Ուկրաինա:

«Սա նշանակում է ներդրումներ կատարել ամերիկյան արդյունաբերության մեջ: Դա նշանակում է աշխատատեղեր ԱՄՆ-ում,- ասել է Բլինքենը: - Դա փոխշահավետ է: Սա ձեռնտու է մեզ, բայց պետք է ձեռնտու լինի նաեւ Ուկրաինային»:

ՄԵԿՆԱԲԱՆԵԼ Է

Ադրբեջանի արտաքին գործերի նախարարության մամուլի քարտուղար Այխան Հաջիզադեն մեկնաբանել է Եվրախորհրդարանի ընդունած բանաձեւը, որը նախատեսում է պատժամիջոցներ կիրառել Ադրբեջանի դեմ:

Ադրբեջանի արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչը հայտարարել է, որ փաստաթուղթը զրպարտչական է եւ մակերեսային:

Հիշեցնենք, որ բանաձեւը նախատեսում է պատժամիջոցներ Ադրբեջանի կողմից Հայաստանի դեմ ագրեսիայի դեպքում:

ՀՀ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Ո՞ՒՐ ԵՆ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Մեկ տասնյակից ավելի դրվագով ակնհայտ է դարձել, որ Հայաստանի դաշնակիցը իրեն չի օգնում»,- նման դիրքորոշում հայտնեց ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը խորհրդարանում լրագրողների հետ զրույցում:

«Մեկ տասնյակից ավելի դրվագով ակնհայտ դարձավ, որ մեր դաշնակիցը մեզ չի օգնում: Չեն էլ ասում, որ չեն օգնում, բայց մեր երկիրն ու մեր մարդիկ անսահման ու անծայրածիր չեն: Մենք այդքան ռեսուրս չունենք, որ մեր տղաների, մեր երկրի սահմանների հաշվին սպասենք, թե մեր դաշնակիցը, որը դաշնակից է եւ ՀԱՊԿ-ով, եւ ուղիղ պայմանագրով, երբ է օգնելու: Իրենք հետո ասում են, թե մենք այսինչը չարեցինք, դրա համար իրենք չօգնեցին, իսկ ո՞ւր են դաշնակցական պարտավորությունները: Պարտավորություններն իրենց վրայից գցում են»,-ասաց Սիմոնյանը:

Հայաստանի համար ակնհայտ է, որ այդ անվտանգային համակարգը չի գործում:

«Էլ ի՞նչ պետք է լինի, որ մենք հասկանանք, որ այս անվտանգային համակարգը չի գործում: Տեսանք, թե Արցախն ինչ եղավ, Խծաբերդը, Հին Թաղերը, Սեւ լիճը, Ջերմուկը, Լաչինի միջանցքը, գերիները, տեսանք, թե ինչ եղավ: Մեր ռեսուրսը՝ մարդկային, քաղաքական, պետական, անսահմանափակ չէ»,-ասաց նա:

Ըստ Սիմոնյանի՝ անվտանգային այլընտրանքը, ՀՀ կարծիքով, բոլոր հնարավոր միջոցներն օգտագործելն է, նաեւ փորձ անել ՀԱՊԿ-ին ինչ-որ ձեւ վերակենդանացնել:

Անդրադառնալով հնարավոր այլընտրանքի վերաբերյալ հարցին՝ ԱԺ նախագահն ասաց. «Հիմա մենք փորձում ենք զենք գնել բոլոր հնարավոր տեղերից՝ մեր պետությունը պաշտպանելու համար: Հիմա, եթե դա ինչ-որ մի անվտանգային համակարգի խանգարում է, իրենց խնդիրն է. ակնհայտ է, որ իրենք իրենց պարտավորությունները չեն կատարում»:

Հայաստանը շարժվելու է այն ուղղությամբ, որը իրեն առավել անվտանգություն կապահովի: ԱԺ նախագահը համարում է, որ ժողովրդավար երկիր լինելը Հայաստանի անվտանգային ամենամեծ համակարգն է: Աշխարհը հիմա բաժանվել է երկու մասի: Ըստ նրա՝ մի մասն ասում է, որ աշխարհակարգ ու կանոններ գոյություն ունեն՝ ինչպես Ալմաթայի հռչակագիրը, մի մասն ասում է, որ ուժեղի իրավունքն է գործում: Հայաստանը համարում է, որ իր անվտանգությունը ժողովրդավար երկիր լինելն է, ժողովրդավար համակարգի հետ առնվազն շատ սերտ աշխատելը:

«Մենք ֆիզիկապես ավելի ուժեղ չենք ո՛չ Թուրքիայից, ո՛չ Ադրբեջանից, մենք չենք կարող դիմակայել, առավել եւս, երբ դաշնակիցը, որը մեզ պետք է պաշտպաներ, լավագույն դեպքում մեզ չի պաշտպանում, եթե ոչ համատեղ գործընթացի մեջ է գտնվում: Իսկ ես վստահ եմ, որ համատեղ գործընթաց կա եւ շատ վաղուց: Եվ վստահ եմ, ու Ուկրաինայի պատերազմը սկսվել է Լեռնային Ղարաբաղի պատերազմով: Այստեղ պետք էր այլընտրանքային ճանապարհ ստանալ հնարավոր պատժամիջոցներից խուսափելու համար, ինչը հիմա արվում է, ինչպես, օրինակ, ռուսական գազը հիմա Ադրբեջանը վաճառում է Եվրոպային իր խողովակներով: Դա փաստ է, իմ հորինածը չէ»,-ասաց Սիմոնյանը:

ԱԺ նախագահը, այսպիսով, չի բացառում Ադրբեջանի եւ Ռուսաստանի պայմանավորվածությունը: «Նույնիսկ կարող եմ ասել, որ Սիրիայից է սկսվել: Ռուս-թուրքական բախումը Սիրիայում, լարվածություն եղավ, հետո տեղափոխվեց մեր տարածաշրջան: Փորձ կատարվեց այս տարածաշրջանում ապահովել ստաբիլություն, օղակ գցել երկու երկրների վզին՝ թե՛ Հայաստանի, թե՛ Ադրբեջանի վրա: Թուրքիան ներս մտավ»,-ասաց Սիմոնյանը՝ չբացառելով, որ Թուրքիայի հետ է եղել պայմանավորվածությունը:

Ալեն Սիմոնյանը մտահոգված է, որ կարող է պայմանավորված էսկալացիա լինել: Ըստ նրա՝ ամենամեծ մտահոգությունն է, թե որտեղից է հարվածը լինելու. ակնհայտ է, որ այդ հարվածն արվում է Ադրբեջանի ձեռքերով, ուղղված է Հայաստանի ինքնիշխանության դեմ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԵՒ

ԹԻՐԱԽԱՅԻՆ ԲԱՆԱՁԵՎԵՐ

Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արման Եղոյանը անդրադարձավ Եվրոպական խորհրդարանի ընդունած ԵՄ ընդհանուր անվտանգային եւ պաշտպանային քաղաքականության վերաբերյալ տարեկան զեկույցին, որում կոչ է արվում դադարեցնել նավթի ու գազի ներմուծումը Ադրբեջանից ցանկացած ռազմական ագրեսիայի դեպքում: Լրագրողների հետ ճեղազրույցում Եղոյանն ասաց, որ Եվրոպական խորհրդարանում բանաձեւերը ընդունում են փորձառու քաղաքական գործիչներ, որոնք մեծ ազդեցություն ունեն իրենց երկրներում վարվող քաղաքականության վրա:

«Եվրախորհրդարանն իր տեսանկյունից ոչ թե հայանպաստ կամ ադրբեջանանպաստ հայտարարություններ է ընդունում, այլ ինքը նայում է օբյեկտիվ իրողություններին, աշխարհակարգի պահպանմանը, բալանսին, եւ եթե տեսնում է, որ ինչ-որ գործողություն իր պատկերացրած աշխարհակարգին վնաս է, որոշում է ընդունում»,- ընդգծեց Եղոյանը:

Նրա խոսքով՝ Եվրոպական խորհրդարանի բանաձեւերը, այսպես, թե այնպես, մտնում են եվրոպական քաղաքական շրջանակների օրակարգ՝ բառապաշարը, նարատիվները, թեմաները, որոնց շուրջ սկսում են մտածել:

«Եվ եթե նայեք ժամանակագրությունը, վերջին երեք տարվա ընթացքում Եվրախորհրդարանի բանաձեւերը ավելի ու ավելի թիրախային են դառնում Ադրբեջանի կողմից վարվող քաղաքականության անթույլատրելիության վերաբերյալ: Օրինակ՝ սրանից երկու տարի առաջ պատժամիջոցների մասին ոչ մեկ չէր խոսում, չէին էլ նույնիսկ մտածում, հիմա արդեն խոսում են պատժամիջոցներից ոչ միայն անհատական, այլ ընդհանուր նավթի եւ գազի գնման արգելքից, ինչը շատ լուրջ ազդակ է: Գիտեմ, որ սա միայն Եվրախորհրդարանի դիրքորոշումը չէ, ԵՄ շատ անդամ պետություններ պատրաստ են նշված վտանգավոր զարգացումների դեպքում կիրառել այդ գործիքակազմը»,- եզրափակեց Եղոյանը:

Եվրոպական խորհրդարանն ընդունել է արտաքին քաղաքականության եւ ԵՄ անվտանգության ու պաշտպանության քաղաքականության վերաբերյալ 2 զեկույց, որոնցում խստորեն դատապարտում է Ադրբեջանի կողմից նախապես ծրագրված եւ չարդարացված հարձակումը Լեռնային Ղարաբաղի հայերի դեմ ու կոչ անում Ադրբեջանի իշխանություններին թույլատրել հայ բնակչության անվտանգ վերադարձը Լեռնային Ղարաբաղ ամուր երաշխիքների ներքո: Եվրոպական խորհրդարանը փետրվարի 28-ին ընդունած ԵՄ ընդհանուր անվտանգային եւ պաշտպանային քաղաքականության վերաբերյալ տարեկան զեկույցում ընդգծել է Հայաստանի նկատմամբ ագրեսիայի դեպքում Ադրբեջանի դեմ նպատակային ու հասցեական պատժամիջոցների կիրառման անհրաժեշտությունը:

ԳՈՐԻՍ

ՊԱՐԶՎԵԼ ԵՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Պարզվել են 2024թ. փետրվարի 2-ին Գորիս քաղաքում երեք անձի նկատմամբ կատարված հրազենով մահափորձի դեպքի էական հանգամանքներ: Այս մասին տեղեկացնում են ՀՀ ՔԿ-ից:

«Մասնավորապես, Ոստիկանության Գորիսի բաժնում նշված օրը հաղորդում է ստացվել այն մասին, որ ժամը 12:10-ի սահմաններում Գորիս քաղաքի սրտաբանական հիվանդանոցի դիմաց տեղի է ունեցել վիճաբանություն, ինչից հետո մեկ անձ հրազենային վնասվածքով տեղափոխվել է հիվանդանոց:

«Դեպքի առիթով ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության Գորիսի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակներում կտարված դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել է կրակված 5 պարկուճ, որից 2-ը՝ մարտական փամփուշտի, 3-ը՝ գազային ատրճանակի:

Նախաքննությամբ ձեռք բերված փաստական տվյալներով պարզվել է, որ Գորիսի 40-ամյա բնակչի նկատմամբ առերեւույթ սպանության փորձ է կատարել վերջինիս համաքաղաքացին, ով նույն միջադեպի ժամանակ կրակոցներ է արձակել նաեւ 40-ամյա տղամարդու երկու եղբայրների ուղղությամբ:

Մասնավորապես, պարզվել է, որ 38-ամյա տղամարդը քննությամբ դեռեւս չպարզված հանգամանքներում ապօրինի կերպով ձեռք է բերել հրազեն հանդիսացող «AK-74» տեսակի ինքնաձիգ, ապօրինի կերպով պատրաստված «Մակարով» տեսակի ատրճանակ եւ ռազմամթերք հանդիսացող առնվազն 35 5,45մմ եւ 9մմ տրամաչափի փամփուշտներ:

Դրանք 2024թ. փետրվարի 2-ին իր ավտոմեքենայով ապօրինի կերպով փոխադրել է Գորիս քաղաքի Երեւանյան խճուղի-Խաղաղության փողոցների հատման խաչմերուկ, որտեղ նախկինում ունեցած տարաձայնությունների պատճառով ժամը 12:30-ի սահմաններում իր ավտոմեքենայով փակել է 40-ամյա տղամարդու եղբոր վարած «ՈՒԱԶ» մակնիշի մեքենայի ընթացքը եւ իրական վտանգ ստեղծելով ինչպես «ՈՒԱԶ»-ի, այնպես էլ դրա հետեւից ընթացող «ՎԱԶ 21074» մակնիշի մեքենայի ուղեւորների կյանքի ու առողջության համար՝ հատկապես «ՈՒԱԶ»-ի վարորդին կյանքից զրկելու դիտավորությամբ առնվազն 4 դիմահար կրակոց է արձակել նրա վարած մեքենայի ուղղությամբ՝ վնասելով այն:

Շարունակելով հանցավոր արարքները՝ տղամարդը մի քանի կրակոց էլ արձակել է «ՈՒԱԶ»-ի վարորդի՝ արդեն մեքենաներից դուրս եկած եղբայրների ուղղությամբ, ինչի արդյունքում նրանցից մեկին պատճառվել է ձախ ազդրի հրազենային վնասվածք:

«Մակարով» տեսակի ատրճանակի փամփուշտները սպառվելուց հետո 38-ամյա տղամարդը հանցագործությունն ավարտին հասցնելու դիտավորությամբ մեքենայի սրահից վերցրել է այնտեղ ապօրինի պահած «AK-74» տեսակի ինքնաձիգը, սակայն չի հասցրել դրանով կրակոցներ արձակել, քանի որ «ՎԱԶ 21074»-ի ուղեւորները նրա ձեռքից այն խլել են, ինչից հետո վերջինս, դեպքի վայրում թողնելով մեքենան, դիմել է փախուստի:

Ձեռք բերված փաստերի հիման վրա՝ միջնորդություն է ներկայացվել հսկող դատախազին նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասով եւ 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով՝ 3 դրվագ, հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին, որը բավարարվել է: Որոշում է կայացվել նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին, եւ հայտարարվել է հետախուզում:

Նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են քննչական ու վարութային, ինչպես նաեւ օպերատիվ-հետախուզական անհրաժեշտ բոլոր միջոցառումները տղամարդուն հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու նպատակով»,- ասված է հաղորդագրության մեջ:

Նշենք, որ ArmLur.am-ը գրել էր՝ ArmLur.am-ին հասած լուրերի համաձայն՝ Գորիսում հնչած կրակոցի մասնակիցները երկար տարիների թշնամանք ունեն միմյանց դեմ, ինչի համար էլ հնչել են այդ կրակոցները: Կրակոցից տուժածներից մեկը Սյունիքի նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրյանի անվտանգության պետի եղբայրն է՝ Ալիկ Աբրահամյանը. վերջինիս տեղափոխել են հիվանդանոց:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

«ՍՐՏԻ» ԴԱՏԱՎՈՐՆԵՐԸ

ՀԵՏԱՔՐՔԻՐ ԱՎԱՐՏ

Այն, որ Նիկոլ Փաշինյանի հույսը մնացել են իրավապահ մարմինները, այն էլ՝ ոչ ամբողջությամբ, նորություն չէ, սակայն նույնիսկ այս ոլորտում բոլորը չէ, որ պատրաստ են դեմ գնալ օրենքներին ու անվերապահ կատարել Փաշինյանի ցանկությունները, որոշ դեպքերում՝ անգամ «կապրիզները»:

Պատահական չէ, որ քաղաքական ենթատեքստ ունեցող գործերով գրեթե նույն դատախազներն ու դատավորներն են նշանակվում: Սակայն, որպես օրինաչափություն, Փաշինյանի «սրտի» դատախազներին ու քննիչներին հետաքրքիր ճակատագրեր են սպասվում. նրանք ոչ միայն պարգեւատրվում են, այլեւ ծառայություններից օգտվելուց հետո, ի վերջո, նրանցից բավականին արագ ազատվում են: Ի մասնավորի՝ կարելի է հիշել նախկին քննիչ Հրաչյա Մուշեղյանին, որը ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի դեմ քաղաքական հետապնդման հիմնական դերակատարներից մեկն էր: Մուշեղյանը, ինչպես հայտնի է, հիմնական «պատռվողներից» մեկն էր, որպեսզի Քոչարյանը պարտադիր ազատազրկված լինի: Նրա հետ նույն գործն ու նույն տրամաբանությունը տանում էին նաեւ մեղադրողները՝ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը, դատախազներ Գեւորգ Բաղդասարյանը, Պետրոս Պետրոսյանը:

Հրաչյա Մուշեղյանը, որը երեւի թե մեծ ակնկալիքներ ուներ Փաշինյանի իշխանությունից, ի վերջո, հայտնվեց լուսանցքում. դուրս եկավ համակարգից, դարձավ փաստաբան, իսկ անցած տարի՝ օգոստոսի 12-ին, դարձավ Կոմիտասի պողոտայում տեղի ունեցած մահվան ելքով ավտովթարի «հեղինակ» (ի դեպ, ղեկին է եղել ոչ սթափ վիճակում), իսկ այսօր բավարարվում է նրանով, որ իրեն՝ որպես նախկին քննիչի, չեն կալանավորել, ժամանակավորապես ազատության մեջ է, ինչպես ասում են, մինչեւ մի լույս կբացվի:

Փաշինյանի իշխանության համար գլխավոր դատախազի պարտականությունները «բարեհաջող» իրականացրած Արթուր Դավթյանը նույնպես հայտնվեց լուսանցքում. մամուլը գրեց, թե ուր որ է Մոսկվայում դասախոսություններ պետք է կարդա, մի անգամ էլ կադրերում երեւաց Արցախի թեմայով փողոց դուրս եկած ժողովրդի մեջ, ու այդպես էլ մինչ հիմա տեղեկություն չկա, թե ինչով է զբաղվում նա: Բաղդասարյանն ու Պետրոսյանը նոր դատախազ Վարդապետյանի պաշտոնավարման հենց սկզբից դուրս մնացին համակարգից: Ճիշտ է, հետո նրանք պաշտոնների նշանակվեցին ՔԿ-ում, բայց այդ պաշտոնները, մեղմ ասած, «այն չէին»՝ հաշվի առնելով նրանց հավակնություններն ու Փաշինյանին մատուցած ծառայությունները: Դժվար չէ կանխատեսել, թե ինչ «պայծառ ապագա» է սպասվում դատախազ Արթուր Դանիելյանին, որը հիմա ներգրավված է ԱԺ պատգամավոր Լեւոն Քոչարյանի եւ փողոցային ակցիաների մասնակից, ծնունդով արցախցի Սերգեյ Ասատուրովի «գործով»:

ՎԱՐՈՒՅԹ

ՓԱՅՏԵ ՎԱՌԱՐԱՆԸ ՊԱՅԹԵԼ Է

Փետրվարի 28-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Լոռու մարզում: Ժամը 13:45-ի սահմաններում «Վանաձոր» բժշկական կենտրոնից ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Լոռու մարզային վարչություն ահազանգ է ստացվել, որ շտապօգնության բժիշկների հերթապահ խումբը «պոլիտրավմա» ախտորոշմամբ իրենց մոտ է տեղափոխել մի քաղաքացու:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, հիվանդանոց է մեկնել ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ Արթուր Զաքարյանը եւ ոստիկանության Գուգարքի բաժնի պետ Մելինե Եղշատյանը:

Հիվանդանոցում բժիշկները ոստիկաններին հայտնել են, որ վիրավորը ի վիճակի չէ կատարվածի մասին բացատրություն տալու, քանի որ գտնվում է հետազոտման փուլում:

Ոստիկանները պարզել են, որ վիրավորը Լոռու մարզի բնակիչ 59-ամյա Միհեր Խ.-ն է, եւ նույն օրը ժամը 12:00-ի սահմաններում իրենց տան առաջին հարկում գտնվող ավտոտնակում տեղադրված փայտե վառարանը դեռեւս անհայտ հանգամանքներում պայթել է, ինչից նա վնասվածքներ է ստացել:

Դեպքի փաստով ոստիկանության Գուգարքի բաժնում փաստաթղթեր են ձեւակերպվել, որոնք փոխանցվել են Հայաստանի Քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչություն, որտեղ «անզգուշությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը» հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 28-ից 29-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 113 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՆՏԵՂՅԱԿ ՄԱՐԶՊԵՏԸ

Նիկոլ Փաշինյանի հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշումով 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանին նախկինում տեղեկատվական հարցում ենք արել՝ նրան հարցնելով՝ Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների ընդհանուր թվով քանի ուսուցիչ է մասնակցել կամավոր ատեստավորմանը: Մարզպետը այդ հարցին չէր պատասխանել: Փետրվարի 21-ին նորից ենք նրան տեղեկատվական հարցում ուղարկել, որի մեջ նշել ենք. «Փետրվարի 12-ին իմ ուղարկած հարցման 3-րդ կետով հարցրել եմ՝ հանրակրթական դպրոցների ուսուցիչների կամավոր ատեստավորման գործընթացը սկսվելուց հետո մինչ այժմ Տավուշի մարզի դպրոցների քանի՞ ուսուցիչ է մասնակցել այդ գործընթացին: Ձեր պատասխանում չեք հայտնել կամավոր ատեստավորմանը մասնակցած ուսուցիչների ընդհանուր թիվը: Խնդրում եմ հայտնել այդ թիվը»: Մարզպետի պատասխանում նշված է. «Քանի որ Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների ուսուցիչները կամավոր ատեստավորմանն իրենք են հայտագրվում, հետեւաբար մենք չունենք տեղեկատվություն այն մասին, թե քանի ուսուցիչ է մասնակցել այդ գործընթացին»: Ութ տասնյակ աշխատակից ունեցող Տավուշի մարզպետարանն ընդամենը երկու ոլորտ է ղեկավարում՝ մարզի հանրակրթական դպրոցները եւ մարզի առողջապահական հիմնարկները: Մարզպետն անտեղյակ է, թե իր ղեկավարած հանրակրթական դպրոցների քանի ուսուցիչ է մասնակցել կամավոր ատեստավորմանը: Ուսուցիչները ատեստավորմանը կամավոր են մասնակցել, սակայն դրան մասնակցած ուսուցիչների մասին տեղյակ է տվյալ դպրոցի տնօրենը, որն էլ այդ տեղեկատվությունը տրամադրում է վերադասին՝ մարզպետարան: Ատեստավորմանը մասնակցած ուսուցիչների թվին անտեղյակ կամ անտեղյակ ձեւացող մարզպետ Ղալումյանը եւ Տավուշի մարզպետարանի պաշտոնյաները 2023 թվականին պետբյուջեից 71 միլիոն 960 հազար դրամ պարգեւավճար են ստացել: Ինչո՞ւ են ստացել, իրենց գործից անտեղյակությա՞ն համար:

ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒՆԵՆ

Մարզպետարանից հայտնում են, որ ներկայումս Տավուշի մարզում բնակվում է Արցախից բռնի տեղահանված 2727 անձ: Տավուշի մարզպետին հարցրել ենք, թե Տավուշի մարզում վերաբնակված արցախցիներից քանիսը Տավուշի մարզում հիմնական աշխատանք, սեփականության իրավունքով բնակարան, տուն ունի: Մարզպետարանից պատասխանել են. «ՀՀ Տավուշի մարզում Լեռնային Ղարաբաղից վերաբնակեցված 205 քաղաքացիներ ունեն հիմնական աշխատանք: ՀՀ Տավուշի մարզում վերաբնակեցված սեփականության իրավունքով բնակարան կամ տուն ունեցող քաղաքացիների վերաբերյալ տեղեկություններ չկան»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԵՄ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱԴՐՎԵԼ ԵՆ ԷԿՈ-ԱԿՈՒՄԲՆԵՐ

Եվրամիության ֆինանսավորմամբ իրականացված «ԵՄ հանուն շրջակա միջավայրի. կանաչ համայնք՝ դիմակայուն աղագա» ծրագրի շրջանակում Հայաստանում հիմնադրվել են 10 նոր էկո-ակումբներ, հզորացվել են արդեն գործող 5 էկո-ակումբները: Ծրագրի կրթական բաղադրիչի շնորհիվ համայնքներում խթանվելու է կանաչ կենսակերպը, եւ դասընթացները ներառելու են ինչպես շրջակա միջավայրի պահպանությանը, կանաչապատմանը, այնպես էլ կենցաղային թափոնների կառավարմանը, էներգաարդյունավետությանը եւ էներգախնայողությանը վերաբերող հարցեր: Կազմակերպվելու են նաեւ համայնքներում իրազեկման մակարդակը բարձրացնող միջոցառումներ:

Այս մասին ընդգծեցին ծրագրի պատասխանատուները ծրագրի փակման եւ արդյունքների ամփոփման միջոցառմանը՝ փետրվարի 29-ին, Երեւանում: Ծրագիրն իրականացրել է «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամը «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի ու «Էներգետիկայի հայկական գործակալություն» հիմնադրամի հետ համագործակցությամբ:

Ողջույնի խոսքում ՀՀ-ում ԵՄ պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավար Ֆրենկ Հեսսը նշեց, որ շրջակա միջավայրին վերաբերող տարատեսակ հարցերը մշտապես Եվրամիության ուշադրության կենտրոնում են, որի պատվիրակության հանձնառություններից մեկն էլ այդ հարցերում մասնագիտացված կառույցներին օգնելն ու աջակցելն է, երբ խոսք է գնում օրինակ գլոբալ կլիմայական փոփոխությունների մասին:

«Կանաչ գործարքը մեզ համար ունի կենսական նշանակություն, քանի որ մեր գործունեության մի ուղղությունը միտված է շրջակա միջավայրին առնչվող խնդիրների լուծմանը, ինչպիսիք են օդի աղտոտվածությունը, կենսաբազմազանության կորուստը, հետեւաբար սատարում ենք մի շարք ծրագրերի: Դրանցից են, օրինակ, վերականգնվող էներգիայի աղբյուրների խթանումը, շրջանաձեւ տնտեսության զարգացումը եւ թափոնների նվազումը: Ծրագրերի իրագործման գործում կիրառում ենք մեր իրավասության ներքո գտնվող հնարավորությունները: «Կանաչ գործարքի» շրջանակում շատ կարեւոր է այնպիսի միջավայրի ստեղծումը, որտեղ հնարավոր կլինի ստանալ ավելի մաքուր էներգիա եւ բնապահպանական իրավիճակը դարձնել ավելի բարվոք»,- ասաց Հեսսը:

Նրա խոսքով՝ կլիմայական փոփոխություններին դիմագրավելու առումով կատարվում են զգալի աշխատանքներ՝ հաշվի առնելով էկոհամակարգի առանձնահատկությունները: Իրականացման փուլում է նաեւ այնպիսի ծրագիր, որն առնչվում է Սեւանա լճի բնապահպանական խնդիրներին, իսկ Երեւանում ընթացքի մեջ է թափոնների վերահսկման ծրագիրը: ԵՄ պատվիրակությունը Հայաստանում աշխատում է ինչպես պետական գերատեսչությունների, այնպես էլ քաղհասարակության ներկայացուցիչների հետ:

«Մասնավորապես «Էյ Թի Փի» ծրագիրը շատ կարեւոր է այն առումով, որ ընդգրկում է շրջակա միջավայրի կոնկրետ հարցերի վերաբերող շրջանակ: Մեզ համար մեծ նշանակություն ունի նաեւ այն հանգամանքը, որ երիտասարդները լինեն իրազեկված շրջակա միջավայրում տեղի ունեցող փոփոխությունների մասով եւ կարողանան պատշաճ քայլեր ձեռնարկել Եվրամիության կողմից աջակցության արժանացած ծրագրերի շրջանակում: Վերջին երեք տարիների ընթացքում ԵՄ-ն ծախսել է 300 միլիոն դրամ, եւ սա այն ոլորտն է, որտեղ ծրագրերը պետք է կրեն շարունակական բնույթ»,- ասաց ՀՀ-ում ԵՄ պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավարը:

«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի համակարգող Ռուզաննա Առուստամյանն իր խոսքում նշեց, որ ծրագիրը մեկնարկել է 2021 թվականին, որի իրականացման ճանապարհին իրենք անցել են պատասխանատու գործընկերների հետ, որոնք ակտիվորեն ներգրավվել են ծրագրի տարբեր փուլերում:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ

ԲԼՈԿՉԵՅՆ ՇՈՒԿԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Հյուրընկալվելով հայաստանյան «Առաջին ալիք»-ի «Հարցազրույց» հաղորդաշարին՝ Fastex-ի գլխավոր տնօրեն Վախթանգ Աբրահամյանն անդրադարձել է երկրում եւ ամբողջ աշխարհում բլոկչեյն տեխնոլոգիաների տարածմանը եւ շուկայի միտումներին:

Պարոն Աբրահամյանը խոսել է վերջին 10 տարիների ընթացքում տեխնոլոգիական առաջընթացի եւ նոր սերնդի «թվային վստահության ձեւավորման» մշակույթի մասին: Այսօր բլոկչեյնի նորարարական լուծումները թույլ են տալիս համաշխարհային թվային ակտիվների շուկայում իրականացնել հեշտ եւ արագ գործարքներ՝ առանց երրորդ կողմի ներգրավվածության: Հարցին, թե ինչ կտա թվային դրամի ներմուծումը հայաստանյան կենցաղ եւ երկրի քաղաքացիներին, պարոն Աբրահամյանը պատասխանել է. «Թվային դրամի ներմուծումը հնարավորություն կտա «ծրագրավորված փող» օգտագործել կյանքի տարբեր ոլորտներում՝ սկսած հարկերի ավտոմատ վճարումներից, պետական ֆինանսների օպտիմալ տնօրինումից մինչեւ առեւտրային գործարքներում տարբեր տեսակի երաշխիքների տրամադրումը»:

Անդրադարձ է եղել նաեւ թվային ակտիվների տեսակներին եւ կիրառելիության ոլորտներին: Հաղորդաշարի հյուրը պատմել է, որ դրանք կարող են օգտագործվել որպես արժույթ ժամանցային ոլորտում, վճարային նպատակներով տարբեր գործարքներ իրականցնելիս, ինչպես նաեւ հանդիսանալ բլոկչեյն հարթակի հիմնական կրիպտոարժույթ: Օրինակ՝ հայկական արմատներով առաջին թվային ակտիվը՝ FTN-ը, Bahamut բլոկչեյնի հիմնական արժույթն է:

Աբրահամյանի խոսքով՝ տեղական շուկայում օրենսդրական կարգավորումներն ընթացքի մեջ են: Նախատեսվում են հանդիպումներ բլոկչեյն ծրագրային լուծումներ եւ թվային ակտիվների ծառայություններ մատուցող կազմակերպությունների եւ կարգավորող մարմնի միջեւ: Սա ոլորտի զարգացման գործընթացում կարեւոր քայլ է:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 17 պատահար. 25 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԱԿԱՄԱ ՎԱՐԿԱՌՈՒ

ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ՝ ԽԱՉԻԿՑԻՆԵՐԻՆ

ՀՀ կառավարությունը որոշել է 65,7 միլիոն դրամ հատկացնել Վայոց ձորի Խաչիկ գյուղի այն բնակիչների պարտավորությունների մարմանը, որոնք, որպես երկու վարկառուի երաշխավոր, զեղծարարության զոհ են դարձել:

Այս մասին ՀՀ կառավարության փետրվարի 29-ի հերթական նիստում տեղեկացրել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ մանրամասնելով, որ այդպիսով կզրոյացվի Խաչիկ գյուղի բոլոր այն բնակիչների պարտավորությունները, ովքեր չիմացության ու վստահության զոհ էին դարձել որպես վարկառուների երաշխավոր:

Նա համառոտ ներկայացրեց, որ Խաչիկում տարիներ առաջ վարկառու երկու քաղաքացի ինչ-որ մեխանիզմներով որպես երաշխավոր ընդգրկել էին գյուղի մի քանի տասնյակ բնակիչների, սակայն այնուհետեւ չեն կատարել ստանձնած պարտավորությունները, ինչի հետեւանքով տուժել էին գյուղացիները:

Փաշինյանի խոսքով՝ աջակցության առաջնային նպատակն այն է, որ սահմանամերձ Խաչիկ գյուղի բնակիչները եւս կարողանան օգտվել բնակելի տներ կառուցելու պետական աջակցության ծրագրից:

Ընդունված որոշման արդյունքում խաչիկցիները հնարավորություն կունենան որոշակի վարկեր ստանալ, օգտվել համապատասխան ծրագրերից, ինչից զրկված էին նախկինում:

Անդրադառնալով այդ աղմկահարույց, քրեական գործի հարուցմամբ ուղեկցված պատմությանը՝ ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Հովհաննես Խաչատրյանն էլ պարզաբանել է, որ Խաչիկ գյուղի 77 բնակիչ դրա հետեւանքով նաեւ վարկառու է համարվում, չնայած իրենց փոխարեն այլ անձինք են ստացել վարկերը:

Հարուցված համապատասխան քրեական գործի արդյունքում այդ քաղաքացիների վարկային պարտավորությունները մարվել են:

Կառավարության որոշմամբ հատկացվող գումարի շնորհիվ կզրոյացվեն վարկային երկու կազմակերպությունում այդ քաղաքացիների ունեցած վարկային տոկոսների, տուգանքների, ինչպես նաեւ դատական ծախսերի մնացած մասը, որն ընդհանուր 50 մլն դրամ է կազմում:

Այդուհանդերձ, ըստ Հովհաննիսյանի, իրավական հիմքեր չկան եւ ճիշտ չէ վարկային համապատասխան շտեմարաններից ջնջել այդ քաղաքացիների պարտավորությունների պատմությունը:

«Մարելու հաջորդ օրվանից այնտեղ կերեւա, որ այդ մարդիկ զրո պարտավորություն ունեն: Հատուկ նշում կարվի, որ այս դեպքում նրանք եղել են այդ զեղծարարության զոհը եւ պարտավորություններ իրականում չեն ունեցել»,-պարզաբանել է ԿԲ նախագահի տեղակալը:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ

ԹԱՓՈՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Գեղարքունիքի մարզի Սեւան քաղաքում ներդրվում է կենցաղային կոշտ թափոնների տեսակավորման համակարգ:

Ինչպես տեղեկացանք Սեւանի համայնքապետարանի աշխատակազմից, օրերս Սեւանի Խ. Աբովյանի անվան ավագ դպրոցում տեղի է ունեցել հանդիպում-քննարկում համայնքի հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների, դպրոցի աշակերտների, Սեւանի համայնքապետարանի ներկայացուցիչների մասնակցությամբ, որը վարել է Հայաստանի ամերիկյան համալսարանի Յակոբեան բնապահպանական կենտրոնի կողմից իրականացվող «Սեւանում թափոնների տեսակավորում» ծրագրի համակարգող Հարություն Ալպետյանը:

Ըստ բանախոսի՝ Հայաստանի բնակավայրերում տարեկան առաջանում է շուրջ 690 հազար տոննա կոշտ կենցաղային աղբ: Գոյացող աղբի մեծ մասը հեռացվում է շուրջ 300 աղբանոցներ: Երկրի մի քանի բնակավայրերում մասնակի ներդրվել են թափոնների տեսակավորման համակարգեր, սակայն դրանց շնորհիվ հավաքվում է երկրում վերամշակվող ապակե, թղթե, պլաստիկ եւ մետաղյա թափոնների ոչ ավելի քան 5 տոկոսը: Դրանց հիմնական մասը՝ մոտ 95 տոկոսը, տեսակավորվում է հենց աղբանոցներում ոչ ֆորմալ խմբերի կողմից: Արդյունքում՝ առաջ են գալիս մի շարք խնդիրներ՝ ներառյալ անկառավարելի հրդեհներ, մթնոլորտային արտանետումներ եւ համայնքի ֆինանսական կորուստներ:

Հանդիպում-քննարկման ընթացքում, որը միաժամանակ նաեւ իրազեկվածության բարձրացմանն էր միտված, վեր են հանվել աղբահանության ոլորտում առկա մի շարք խնդիրներ, տեղական նշանակության հարցեր:

Ինչպես նշել են հանդիպման կազմակերպիչները, աղբահանության մշակույթի ձեւավորման ճանապարհին անգնահատելի է ուսումնական հաստատությունների դերը, աշակերտների ակտիվ եւ անմիջական մասնակցությունը, որի շնորհիվ ձեւավորված կամավորական շարժումը ոչ միայն ծրագրի ընթացքում, այլ դրանից հետո էլ կարող է տալ ցանկալի արդյունք:

Հանդիպման մասնակիցները ներկայացրել են իրենց տեսլականը, առաջարկել ոլորտային լուծումներ, որոնց առանցքում աղբի տեսակավորումն էր, այսինքն՝ այն հիմնախնդրի լուծումը, որը Սեւան քաղաքում իրականացվող այս ծրագրի վերջնանպատակն է:

Ավագ դպրոց աշակերտների կողմից ներկայացված շնորհանդեսային նյութն էլ աղբահանության ոլորտում առկա խնդիրների բացահայտմանը զուգահեռ լուծման տարբերակներ է առաջարկել:

Ինչպես նշեցին հանդիպման մասնակիցները, Սեւան քաղաքում կոշտ կենցաղային թափոնների տեսակավորման համակարգի ներդրումը կբերի մի շարք դրական փոփոխությունների:

«Ծրագրի հաջող իրականացման համար կարեւոր է Սեւանի բնակիչների աջակցությունը, որի շնորհիվ էլ հնարավոր կլինի ունենալ տեսանելի արդյունք աղբահանության ոլորտում նոր մշակույթի ձեւավորման ճանապարհին: Ծրագիրն իրականացնում է Հայաստանի ամերիկյան համալսարանի Յակոբեան բնապահպանական կենտրոնը՝ Շվեդիայի կառավարության ֆինանսավորմամբ, ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության եւ Սեւանի համայնքապետարանի հետ համատեղ»,-ներկայացրին Սեւանի համայնքապետարանի աշխատակազմից:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԵՆ

ՆՈՐ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐ՝ ԲԵՆԶԻՆԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ

Փետրվարի 29-ին Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի արդեն նախագահ Գեղամ Գեւորգյանն Ազգային ժողովում հայտարարեց, որ բենզինի շուկայում ավելացել է երկու նոր տնտեսվարող: Նա հայտնեց, որ առաջին խոշոր տնտեսվարողի մասնաբաժինը կրճատվել է 10 տոկոսով:

ArmLur.am-ը կապ հաստատեց տնտեսագետ Աղասի Թավադյանի հետ՝ հասկանալու համար՝ ինչ ազդեցություն կարող են ունենալ նոր տնտեսվարողները բենզինի շուկայում. «Մեր կազմակերպության կողմից կատարվել է բենզինի շուկայի հետազոտություն, մասնավորապես՝ համադրել ենք միջազգային շուկան ձեւավորող գները, Հայաստանի Հանրապետության եւ ներքին շուկայի գները: ՀՀ-ում բենզինի գները որոշվում են ոչ թե ներքին որոշակի օլիգարխիկ համաձայնություններով, այլ սահմանին, այսինքն՝ եթե նայենք մեր շուկայի գները, համաշխարհային գները, ինչպես նաեւ սահմանին ձեւավորվող գները, համահունչ են ձեւավորվում»:

Տնտեսագետի խոսքով՝ 2023 թվականի երկրորդ կեսին բենզինի գնի թանկացման պատճառը հիմնականում համաշխարհային բենզինի գների թանկացումն էր, եւ դա ազդեց, որ թանկանա նաեւ Հայաստանում՝ ընդհուպ մինչ 580 դրամ:

«Ասեմ, որ արդեն իսկ մեզ մոտ բենզինի գները բավականին մրցակցային են, եւ այնպես չի, որ ներքին շուկայի վաճառողներն են գին թելադրողները. գինը թելադրում են սահմանին»-հավելեց նա:

Աղասի Թավադյանի կարծիքով՝ տնտեսվարողների ավելացումը կվերաֆիկացնի հայկական շուկան, դա չի ազդի գնի իջեցման վրա: Համաշխարհային բենզինի շուկայում գները կայունացել են:

«Կարելի է հետեւություն անել, որ մրցակցությունը մեծանալու է, ինչքան մեզ մոտ բենզին վաճառողները շատանան: Քանի որ այս տարի ՌԴ-ի ներքին շուկայում կարգավորումներ են, ապա բենզինի գինը հնարավոր է, որ մեզ մոտ էլ փոփոխություններ կրի: Հիմա մեզ մոտ Ռեգուլյարը 490 դրամ է, որը վերջին կետն է, առաջիկայում բենզինի գինը կամ կպահպանվի, կամ կաճի՝ կախված համաշխարհային շուկայից»,-հավելեց նա:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՎԱՀԱԳՆ ՏԱՏՐՅԱՆ

ԱՐԽԻՎԻ ԹՎԱՅՆԱՑՈՒՄ

«Արարատ-Էսքիջյան» թանգարան-հետազոտական կենտրոնը (ԱԷԹՀԿ) եւ Հայոց ցեղասպանության հետազոտման կենտրոնը (ՀՑՀԿ) միասնաբար հայտարարում են, որ սկսել են թվայնացնել պրոֆ. Վահագն Տատրյանի արխիվը:



Պրոֆ. Վահագն Տատրյանը (1926-2019) Հայոց ցեղասպանության աշխարհառչակ ուսումնասիրող է, որը միաժամանակ ցեղասպանության հետազոտությունը ակադեմիական մակարդակի է բարձրացրել: Բազմաթիվ դասախոսությունների ու գիտական հրատարակությունների միջոցով նա Հայոց ցեղասպանությանը մեծ ճանաչողություն է ապահովել: Այս մասին իր ունեցած արխիվային նյութերը եւ գրքերը չափազանց կարեւորություն ունեն բոլոր նրանց համար, որոնք ուսումնասիրում են Հայոց ցեղասպանության ենթահողը, ընթացքն ու հետեւանքները:

Իր երկարամյա գործունեության ընթացքում պրոֆ. Վ. Տատրյանը շատ հարուստ արխիվային նյութեր է հավաքել: Նրա արխիվում կան բազմահազար էջեր ամերիկյան, բրիտանական, գերմանական, ֆրանսիական, հայկական եւ օսմանյան արխիվներից, ինչպես նաեւ ցարդ անտիպ նյութեր ու զանազան լեզուներով մամուլի հրապարակումներ: Իր մահից առաջ պրոֆ. Տատրյանն այս արխիվը փոխանցել է «Արարատ-Էսքիջյան» թանգարանին, իսկ նրա գրքերի մեծ հավաքածուն այժմ գտնվում է Հարավային Կալիֆորնիայի համալսարանի Էդուարդ Դոհենի Կրտսերի անունը կրող գրադարանում:

2009 թ. Տատրյանի արխիվը Բոսթոնից փոխադրելու երկարատեւ աշխատանքներից հետո «Արարատ-Էսքիջյան» թանգարանը ձեռնամուխ եղավ այս նուրբերը թվայնացնելու ծրագրին դրանք մասնագետների հասու դարձնելու համար: Արխիվի փոխադրման եւ նախնական թվայնացման աշխատանքները կազմակերպել է եւ իրականացրել թանգարանի տնօրեն Մագի Գոշին Մանգասարյանը. մի անձնավորություն, որը ամբողջ հոգով ու սրտով նվիրված է այս կարեւոր գործին: Այսպես, 2018 թ. 110.000 էջերից հնարավոր է եղել թվայնացնել եւ ցուցակագրել 28.000-ը: 2023 թ. ստանալով մեծ դրամաշնորհ՝ թանգարանը պետք է սկսի թվայնացնել եւ ցուցակագրել մնացյալ 80.000 էջերը եւս:

Սույն ծրագրի շրջանակում հետազոտողներին դյուրություն ընծայելու նպատակով թվայնացված նյութերը պետք է օժտվեն բանալի բառերի փնտրելու համակարգով: Այս աշխատանքին մասնակից է Քլարքի համալսարանից դոկտ. Անա Ալեքսանյանը, իսկ ծրագիրը ղեկավարում է պրոֆ. Թաներ Աքչամը: Այն նախատեսվում է ավարտին հասցնել 2025 թ. դեկտեմբերին, որից հետո արխիվը կտրամադրվի համացանցով: Շուտով «Արարատ-Էսքիջեան» թանգարանն առցանց հանդիպումի միջոցով կներկայացնի իր այս ծրագիրը: Այս մասին լրացուցիչ կհայտարարվի թանգարանի կայքէջով:

«Արարատ-Էսքիճեան» թանգարանը հիմնել է 1985 թ. հունիսին Լոս Անջելեսում Հայոց ցեղասպանությունը վերապրած Լուտեր Էսքիջյանը: Թանգարանում հավաքվել են յուրահատուկ նուրբեր ու գրքեր, ազգագրական տարատեսակ նմուշներ: Թանգարանը նաեւ մշակութային կենտրոն է՝ արվեստագետների, հետազոտողների եւ համայնքային գործիչների համար, որոնք պարբերաբար ելույթներ են ունենում այնտեղ հանրային հետաքրքրություն ներկայացնող նյութերով: Թանգարանը նաեւ դաստիարակչական նշանակություն ունի. պատահական չէ, որ այցելուների շարքում են համայնքի դպրոցականները: Իսկ Հայոց ցեղասպանության ծրագիրը հիմնվել է 2022 թ. UCLA համալսարանում՝ որպես “The Promise” հայկական հիմնարկի մաս:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐՔԱԿԱՆ

ՁԳՏԵԼՈՒ Է ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆԻՆ

Հայաստանի մարմնամարզության հավաքականի անդամները՝ Արթուր Դավթյանը եւ Վահագն Դավթյանը, ամփոփել են աշխարհի գավաթի խաղարկության երկու փուլերի արդյունքները:

«Իսկապես, դժվար է անընդհատ ոսկե մեդալ նվաճել, քանի որ դրա համար անդադար լավ մարզավիճակում պետք է լինես: Ես տեւական ժամանակ բուժվում էի վնասվածքից: Այս հավաքի ժամանակ միայն մի քիչ ուշ հաջողվեց մարզավիճակս կարգի բերել, բայց հաղթանակը հեշտ չի տրվում, ամեն ինչ պետք է անես երկրի պատիվը բարձր պահելու համար: Այստեղ բարդությունը նրանում է, որ դու կարողանաս ինքդ քեզ հաղթես: Այժմ վնասվածքներ չունեմ, աշխարհի առաջնությունից հետո ամբողջապես վերականգնվել եմ: Բայց սա սպորտ է, ամեն ինչ հնարավոր է »,- ասաց Արթուր Դավթյանը:

Վերջինիս համար աշխարհի գավաթի խաղարկության փուլերում հիմնական մրցակիցն Ուկրաինան ներկայացնող մարզիկն էր:

Հայաստանի հավաքականի անդամ, աշխարհի գավաթների խաղարկության արծաթե եւ բրոնզե մեդալակիր Վահագն Դավթյանի խոսքով՝ թե՛ Եգիպտոսում, թե՛ Գերմանիայում ինքը փորձել է առավելագույնս լավ մասնակցություն ունենալ մրցաշարին:

«Կարեւորն այն է, որ աշխարհ գավաթի խաղարկության երկու փուլերում մրցանակային տեղեր զբաղեցրեցինք: Կարող էի առավել բարձր հորիզոնականներ զբաղեցնել, բայց միավորների ցածր տարբերությամբ մրցակցային տեղերն այլ կերպ բաշխվեցին»,-ասաց նա:

Անդրադառնալով Փարիզի օլիմպիական խաղերի հնարավոր ուղեգրին՝ Վահագն Դավթյանը շեշտեց, որ աշխարհի գավաթի խաղարկության վերջին փուլին լավ է նախապատրաստվելու ու ձգտելու է առավելագույնին:

ՄԵԿՆԵԼ ԵՆ

Հայաստանի կանանց եւ տղամարդկանց բռնցքամարտի հավաքականի ներկայացուցիչները մեկնել են Իտալիա՝ Փարիզի Օլիմպիական խաղերի վարկանիշային մրցաշարին:

Տղամարդկանց թիմի կազմից ուղեգրի համար կպայքարեն Ռուդոլֆ Գարբոյանը (51 կգ), Արթուր Բազեյանը (57 կգ), Նարեկ Հովհաննիսյանը (63,5 կգ), Գուրգեն Մադոյանը (71 կգ), Ռաֆայել Հովհաննիսյանը (80 կգ), Նարեկ Մանասյանը (92 կգ), Դավիթ Չալոյանը (+92 կգ), իսկ կանանցից՝ Անուշ Գրիգորյանը (50 կգ), Տաթեւիկ Խաչատրյանը (54 կգ), Էլիդա Քոչարյանը (60 կգ) եւ Անի Հովսեփյանը (70 կգ):

ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐ-100

ՀՈՒՇԱՐՁԱՆ՝ ՄԻՆՉԵՎ ՏԱՐԵՎԵՐՋ

Հայտնի է հայազգի մեծանուն երգիչ, ՀՀ ազգային հերոս Շառլ Ազնավուրի 100-ամյակին նվիրված հուշարձանի նախագծի հաղթող տարբերակը:

Ընդհանուր առմամբ ստացվել էր 60-ից ավելի հայտ, իսկ ներկայացված մանրակերտերի տարբերակները գերազանցում էին 100-ը: Հաղթող քանդակի հեղինակը Դավիթ Մինասյանն է, որը 9 ձայնով առաջ է ընկել մնացած տարբերակներից, երկրորդ տեղը 2 ձայնով զբաղեցրել է Արմենակ Վարդանյանի քանդակը, որը խրախուսական դրամական պարգեւի կարժանանա:

Ընտրող հանձնաժողովի կազմում 11-ն էին, այդ թվում՝ Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, քաղաքապետի տեղակալ Լեւոն Հովհաննիսյանը, Երեւանի քաղաքապետարանի մշակույթի եւ տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանը, Շառլ Ազնավուրի ընտանիքի անդամները, ոլորտի մասնագետներ՝ նկարիչներ, քանդակագործներ, ճարտարապետներ եւ այլք:

Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի խոսքով՝ անելու են հնարավորը, որ մինչեւ տարեվերջ հուշարձանը կանգնած լինի Շառլ Ազնավուրի անվան հրապարակում:

«Մենք ընդամենը կոնցեպտն ենք համաձայնեցրել, ընտրված տարբերակը մշակումներ կանցնի, որը կրկին հանրության ուշադրության կենտրոնում կլինի: Սա Շառլ Ազնավուրի 100-ամյակին նվիրված կարեւոր կատարվելիք աշխատանքներից մեկն էր: Նա մեր ազգի համար շատ մեծ նշանակություն ունի: Նա իր արվեստով, երգերով մեր ընտանիքները, մանկությունն ու երիտասարդությունն է լցրել: Վստահ եմ, որ այս քանդակը իրապես արտացոլելու է այն էներգիան, որը Ազնավուրը իր կյանքի ընթացքում փոխանցել է մեզ»,- ասաց քաղաքապետը:

Շառլ Ազնավուրի որդին՝ Նիկոլա Ազնավուրը, շնորհակալություն հայտնեց բոլոր այն քանդակագործներին, որոնք մասնակցել են մրցույթին:

«Ես տեսնում եմ, որ բոլորն իրենց հոգին ու սիրտը ներդրել են իրենց գործերում: Դժվար էր ընտրությունը կատարել, բայց լիահույս ենք, որ այն, ինչ ընտրել ենք, կարդարացնի մեր եւ հասարակության սպասելիքները: Մենք այս քանդակի միջոցով տեսնում ենք նաեւ հասարակությանը: Հայրս այս քանդակում մենակ չէ, այլ իր հասարակության հետ, որը շատ կարեւոր է»,-ընդգծեց Նիկոլա Ազնավուրը: Նա տեղեկացրեց՝ Ֆրանսիայում տեղադրվող քանդակի աշխատանքներն ընթացքի մեջ են, սակայն առաջինը կբացվի Շառլ Ազնավուրի անունը կրող այգին, որը լինելու է Փարիզի կենտրոնում:

●Մարտի 3-ին Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի կունենա հոբելյանական համերգ՝նվիրված Արամ Ասատրյանի հիշատակին: Տոմսերի արժեքը՝2000-60000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ո՞վ է հեղինակային իրավունքի տերը, ըստ օրենքի՝ ինչպե՞ս է սահմանվում:

Հրանտ Քոչարյան (24 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հեղինակ է ճանաչվում այն ֆիզիկական անձը, ում ստեղծագործական, մտավոր աշխատանքի արդյունքում ստեղծվել է ստեղծագործությունը (Հեղինակային իրավունքի հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված):

Հեղինակը կարող է իր բացառիկ գույքային իրավունքները փոխանցել կամ օգտագործման թույլտվություն տրամադրել այլ անձանց, որոնք, հեղինակից ձեռք բերելով այդ իրավունքները, դառնում են ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքի իրավատեր:

Մտավոր սեփականության գրասենյակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործությունների հեղինակները եւ նրանց ժառանգներն ու իրավահաջորդները (որոնք սովորաբար կոչվում են իրավատերեր) օգտվում են հեղինակային իրավունքի մասին օրենքով տրամադրվող իրավունքներից:

էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԱՊԱՍՏԱՐԱՆ

ՀԱՐՑ. Մեկ անգամ ապաստարան ստանալու հայց ներկայացրել եմ, բայց սխալ կա մեջը. կարո՞ղ եմ էլի ներկայացնել:

Նարբե Աբրահամյան (32 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ապաստանի դիմումի վերջնական (ներառյալ դատական կարգով) մերժումից հետո կարող եք կրկին դիմում ներկայացնել Միգրացիոն ծառայություն՝ Հայաստանում ապաստան ստանալու համար, եթե՝

- առաջացել են նոր հանգամանքներ, որոնք նախկին դիմումի քննության ժամանակ չեն եղել,
- Դուք ունեք նոր ապացույցներ, որոնք նախկին դիմումի քննարկման ժամանակ չեք կարողացել ներկայացնել:

ՄԱԿ ՓԳՀ Հայաստան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նոր դիմումի քննարկման ժամանակահատվածում Դուք ունեք ապաստան հայցող անձանց համար սահմանված նույն իրավունքները եւ պարտականությունները, որոնք ունեիք Ձեր առաջին դիմումի քննարկման ընթացքում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Վանթյան 56 հասցեի բնակիչներն ահազանգում են. արդեն 1 ամիս է, ինչ փողոցի կոյուղին խցանվել է, եւ կեղտաջրերը լցվում են մարդկանց բակեր եւ տներ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-9 - 12 + 4 + 9
Կոտայքի լեռներ	-8 - 12 + 5 + 8
Կոտայքի նախալեռներ	-5 - 8 + 8 + 10
Գեղարքունիք	-8 - 13 +3 + 6
Լոռի	-6 - 10 + 8 + 10
Տավուշ	-4 - 7 + 8 + 11
Արագածոտնի լեռներ	-8 - 12 +3 + 6
Արագածոտնի նախալեռներ	-5 - 7 + 8 + 11

Արարատ	-4 - 7 +11 + 13
Արմավիր	-4 - 8 +10 + 13
Վայոց ձորի լեռներ	-3 - 7 +3 + 6
Վայոց ձորի նախալեռներ	-3 - 7 +10 + 12
Սյունիքի հովիտներ	-4 - 7 +11 + 14
Սյունիքի նախալեռներ	-9 - 13 +7 + 10
ԼՂՀ	-9 - 10 +7 + 9
Երեւան	1 - 3 + 8 + 10

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **29.2.2024**
Հասցեն՝ Գերաքրքրության մարզ, ք. Վարդենիս, վ. Դավթաշենական 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*